

## **ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե**

### **Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 47/7**

**8 օգոստոսի 2017թ.**

Քննարկվեց Սարատովի թռչնակոմբինատ «ԿՈՒՌՆԻԿՈՎ» ՍՊԸ գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 26.06.2017թ. N1221224 հանձնարարագրի հիման վրա իրականացվող գործողությունների դեմ:

Քննարկման ընթացքում նշվեց, որ 20.06.2017թ. Սարատովի թռչնակոմբինատ «ԿՈՒՌՆԻԿՈՎ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) հիմք ընդունելով «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի հավելված 1-ի 2-րդ կետի պահանջը, դիմում է ներկայացրել ՀՀ ԿԱ ՊԵԿ ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափով հարկվող գործարքների մասով գումարների հաշվանցման և (կամ) վերադարձի համար:

Հանգամանքների փոփոխման հետևանքով 06.07.2017թ. Ընկերությունը դիմում է ներկայացրել ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահին՝ խնդրելով կարճել ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափով հարկվող գործարքների մասով գումարների հաշվանցման և (կամ) վերադարձի դիմումի հիման վրա հարուցված վարույթը՝ Ընկերության կողմից դիմումից հրաժարվելու հիմքով:

Այսուհետև, ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի կողմից 14.07.2017թ. կայացվել է NU-1016-Ա հրամանը՝ 26.06.2017թ. N1221224 հանձնարարագրով անցկացվող ուսումնասիրության ժամկետը երկարաձգելու մասին:

Ընկերությունը խնդրում է կարճել ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 26.06.2017թ. N1221224 հանձնարարագրի հիման վրա իրականացվող ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափով հարկվող գործարքների մասով գումարների հաշվանցման և (կամ) վերադարձի դիմումի հիման վրա հարուցված վարույթը՝ Ընկերության կողմից դիմումից հրաժարվելու հիմքով:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ եզրակացության, որ գանգատը ենթակա չէ քննության, քանի որ գանգատի ներկայացման հիմք հանդիսացած հանգամանքն արդեն իսկ վերացել է: Մասնավորապես, ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի ժամանակավոր պաշտոնակատարի 07.08.2017թ. NU-1188-Ա հրամանի համաձայն՝ ուժը կորցրած է ճանաչվել Սարատովի թռչնակոմբինատ «ԿՈՒՌՆԻԿՈՎ» ՍՊԸ-ում ուսումնասիրություն կատարելու վերաբերյալ

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի կողմից 26.06.2017թ. հրապարակված N1221224 հանձնարարագիրը:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի, «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

### ո Ր Ո Չ ՈՒ Մ Է՝

Սարատովի թռչնակոմբինատ «ԿՈՒՌՆԻԿՈՎ» ՍՊԸ գանգատը թողնել առանց քննության:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ